

«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության

2016թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2016թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի գրավումը: ՀՀ ֆինանսական ցուցանիշները 2016թ.-ի ընթացքում շարունակել են դրական ազդեցություն թողել Ընկերության գործունեության արդյունքների վրա:

2016թ.-ի ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացվել են բաց շուկայական գործառնություններ, կիրառվել են մշտական հնարավորության գործիքներ, ինչպես նաև փոփոխվել են դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները: ՀՀ Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման շրջանակներում նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները: Տոկոսադրույքների փոփոխությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 27-ին, որոնց համար սահմանվել են հետևյալ մեծությունները`

- դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույք` 4,75%
- լոմբարդային ռեպո տոկոսադրույք` 7,75%
- վերաֆինանսավորման տոկոսադրույք` 6,25%:

2017թ. հունվարից բանկերի նորմատիվային կապիտալի նվազագույն չափի փոփոխությունը 5 մլրդ դրամից 30 մլրդ դրամ հանգեցրել է ՀՀ բանկերի կապիտալի համալրմանը և բանկերի խոշորացմանը: Կապիտալի համալրումը դրական ազդեցություն է ունեցել, քանի որ շուկայում դրամական միջոցների մեծ ներհոսք է եղել, ինչն իր հերթին նպաստել է տոկոսադրույքների իջեցմանը: Մասնավորապես տոկոսադրույքների իջեցումը դրական է ազդել Ընկերության զուտ տոկոսային եկամտի վրա:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեղաբաշխած միջին ժամկետային և երկարաժամկետ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքները իջել են, ինչի արդյունքում համապատասխանաբար նվազել են ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող Պետական Պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերը:

Արդյունքում` 01.01.16-31.12.16 ընկած ժամանակահատվածում առաջնային շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը եղել է`

- Կարճաժամկետ պարտատոմսեր` 7.6213%,
- Միջնաժամկետ պարտատոմսեր` 12.6953%,
- Երկարաժամկետ պարտատոմսեր` 14.8829%:

Որպես դրական հետևանք կարելի է շեշտել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված բարձր տարեկան եկամտաբերությամբ Պետական պարտատոմսերը, որոնք դասակարգվել էին որպես վաճառքի համար մատչելի, ապահովել են վերագնահատման պահուստի ան 342.2 մլն դրամով, կազմելով 368.7 մլն դրամ:

Որպես բանկերի խոշորացման բացասական հետևանք հարկ է նշել, որ լավ գործընկերներ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն և «Չարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն դադարել են իրենց գործունեությունը, ինչի հետևանքով թե Ընկերության, թե Ընկերության հաճախորդների համար, ովքեր հանդիսացել են վերոնշյալ բանկերի VIP հաճախորդ, առաջացել են մի շարք խնդիրներ սպասարկման բարձր որակի

ապահովման և սակագնային ճկուն պայմանների հետ կապված: Փոխարենը ներկայումս իրավահաջորդ հանդիսացող բանկերի՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի և «Արարատբանկ» ԲԲԸ-ի հետ, ինչպես նաև այլ գործընկեր բանկերի հետ տարվում են բանակցություններ Ընկերության և նրա հաճախորդների համար սակագնային քաղաքականությունը վերանայելու ուղղությամբ:

Որպես այրնատրանք՝ 2016թ. Ընկերությունը վերսկսել է իր գործընկերությունը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հետ և նոր գործնական հարաբերություններ է հաստատել «Անելիք Բանկ» ՓԲԸ-ի հետ՝ կնքելով դեպո հաշվի սպասարկման և պահառության պայմանագրեր:

2016թ. նոյեմբերի 25-ի ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի նիստով հաստատվեց Ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի վերաձևակերպումը, ինչի արդյունքում ավելացել են Ընկերության կողմից մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների տեսակները: Դրանք են արժեթղթերի փաթեթի կառավարում, խորհրդատվության տրամադրում, պահառության իրականացում: 2016թ-ի վերջում արժեթղթերի փաթեթի հավատարմագրային կառավարման շրջանակներում կնքել է 2 պայմանագիր, սկիզբ դնելով նոր ծառայությունների մատուցմանը: Այս առումով Ընկերությունը նպատակաուղղված է 2017թ.-ի ընթացքում գրավել հաճախորդների էլ ավելի մեծ սեգմենտ՝ հաճախորդների համար բարենպաստ ներդրումային պայմաններ առաջարկելով:

Ընկերության նորմատիվային ընդհանուր կապիտալը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 790.2 մլն դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 795.1 մլն դրամ: Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերությունը 2016 թվականին ապահովեց 139 մլն դրամ զուտ շահույթ:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնհինգ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ տվեցին ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները:

2017թ. ընթացքում Ընկերությունը նախատեսում է շարունակել ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝ ներգրավելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերության ընդհանուր կապիտալը 2016 թվականի վերջում նախատեսվում էր ունենալ 547.3 մլն դրամ, արդյունքում ապահովել է 795.1 մլն դրամ, որը կազմում է գործարար ծրագրով նախատեսված ծավալի 145.3%-ը: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեղաբաշխված միջին ժամկետային և երկարաժամկետ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքները իջել են, ինչի արդյունքում համապատասխանաբար նվազել են ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող Պետական Պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերը: Որպես դրական հետևանք կարելի է շեշտել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված բարձր տարեկան

եկամտաբերությամբ Պետական պարտատոմսերը, որոնք դասակարգվել էին որպես վաճառքի համար մատչելի, ապահովել են վերագնահատման պահուստի ան 342.2 մլն դրամով, կազմելով 368.7 մլն դրամ: 2016թ.-ի ընթացքում ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռը Ընկերության ռեսուրսային պոտենցիալում կազմել է 9.8%: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2016թ.-ի ընթացքում կազմել է 11%: Իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը կազմել է 9.9%: Ընդհանուր ակտիվների փաստացի ծավալը նախորդ տարվա հետ համեմատած ավելացել է և 2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8.0 մլդ դրամ՝ գերազանցելով գործարար ծրագրով նախատեսված 7.3 մլդ դրամը և ապահովելով գործարար ծրագիրը 110.9%-ով: Այսպիսով, նախատեսված ցուցանիշը գերակատարվել էր արդյունավետ աշխատանքի և դիլերային հմտությունների շնորհիվ: Ընդհանուր պարտավորությունների փաստացի ծավալը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 7.3 մլդ դրամ, ինչը ցույց է տալիս, որ նախատեսված ցուցանիշը գերակատարվել էր 108.3%-ով: Գլխավոր պահուստը մնացել է անփոփոխ՝ կազմելով 37.5 մլն դրամ /կանոնադրական կապիտալի 15%-ը/:

բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.


2016թ.-ի ընթացքում Ընկերությունը ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություններից իրականացրել է ինչպես ՀՀ պետական պարտատոմսերով և ՀՀ ոչ պետական պարտատոմսերով:

Ընկերության պորտֆելը բաղկացած է հետևյալ արժեթղթերից.



Ինչպես կարող ենք նկատել, Ընկերությունն ունի ինչպես երկարաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ պետական պարտատոմսեր՝ համապատասխանաբար 3.0 և 3.6 մլրդ:

Պարտատոմսերի կառուցվածքը ըստ մինչև մարում ժամկետայնության



Հարկ է նաև նշել, որ Ընկերության պորտֆելի 72.5%-ը դասակարգվել է որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, իսկ 27.5%-ը՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի շուկայական արժեքը 31.12.16-ի դրությամբ կազմում է 4,826 մլրդ դրամ, ինչը 417.0 մլն դրամով գերազանցում է դրանց հաշվեկշռային արժեքը:

Պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը 31.12.16 դրությամբ (հազար դրամ)



Միջոցները հիմնականում ներգրավվել են ՀՀ ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերի միջոցով:

Ինչպես նշեցինք, Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելը 31.12.2016-ի դրությամբ կազմել է 7.0 մլդ դրամ՝ անվանական արժեքով, որը 2016թ.-ի ընթացքում ապահովել է 803.3 մլն դրամ տոկոսային եկամուտ: Բացի պետական պարտատոմսերից՝ 2016թ.-ին Ընկերությունն իր պորտֆելում ունեցել է նաև Գլոբալ Կրեդիտ ՈւՎԿ ՓԲԸ պարտատոմսեր, որոնք 2016թ.-ի ընթացքում ապահովել են 1.8 մլն դրամ տոկոսային եկամուտ: 2016թ.-ի ընթացքում բարեհաջող մարվել են Արարատքանկ ԲԲԸ-ի պարտատոմսերը, որն Ընկերությունը ձեռք էր բերել դեռևս 2014թ.-ին: Այսպիսով, 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 888.7 մլն դրամ:

գ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել ապահովել 3.0-3.5% եկամտաբերության մարժա ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների միջև:


Ընկերության տոկոսային եկամուտները նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել են 132.5%-ով և կազմել 888,8մլն դրամ: Տոկոսային եկամուտները հիմնականում ձևավորվում են պետական պարտատոմսերում ներդրումներից:

Ընկերության տոկոսային ծախսերը նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 84.9%-ով և կազմել 543.9 մլն դրամ:


2017թ. հունվարից բանկերի նորմատիվային կապիտալի նվազագույն չափի փոփոխությունը 5 մլրդ դրամից 30 մլրդ դրամ հանգեցրել է ՀՀ բանկերի կապիտալի համալրմանը և բանկերի խոշորացմանը: Կապիտալի համալրումը դրական ազդեցություն է ունեցել, քանի որ շուկայում դրամական միջոցների մեծ ներհոսք է եղել, ինչն իր հերթին նպաստել է տոկոսադրույքների իջեցմանը: Մասնավորապես ռեպո տոկոսադրույքների իջեցումը դրական է ազդել Ընկերության գուտ տոկոսային եկամտի վրա: Հարկ է նշել, որ երկրորդային շուկայում կնքված ռեպո միջին կշռված տոկոսադրույքների հետ համեմատած Ընկերության կնքած ռեպո գործարքների տոկոսադրույքները հիմնականում ցածր են շուկայական միջինից: Սա վկայում է Ընկերության աշխատակիցների արդյունավետ աշխատանքի մասին:

ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների համաձայն 2016թ. հունվարի ընթացքում 107,854 մլրդ դրամի 621 այլ ռեպո գործարքներ են կնքվել ՀՀ արժեթղթերի երկրորդային շուկայում՝ միջինը 7,0863% տարեկան եկամտաբերությամբ: Ընկերությունը հունվարի ընթացքում պետական պարտատոմսերով իրականացրել է 14,438 մլրդ ՀՀ դրամի 67 ռեպո գործարքներ միջինը՝ 6,9135% տարեկան եկամտաբերությամբ, որը 0.1728 տոկոսային կետով ցածր է վերոնշյալ ցուցանիշից: Ներկայացնենք նաև հուլիս-դեկտեմբեր ամիսներին կնքված ռեպո գործառնությունների ընկերության միջին և շուկայական միջին կշռված տոկոսադրույքների համեմատությունը:

ՌԵՊՈ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ




Ռեպո և հակադարձ ռեպո տոկոսադրույքների համեմատություն



Ռեպո տոկոսադրույքի իջեցումը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության տոկոսային ծախսերի կառուցվածքում: Ցածր տոկոսադրույքներով ռեսուրսների ներգրավումը հնարավորություն է տվել ուղղակիորեն կրճատել մեր տոկոսային ծախսերը՝ աշխատակիցների կողմից արդյունավետ և ճիշտ դիլերային հմտություններ կիրառելու շնորհիվ:

Այսպիսով, հունվար ամսին ընդհանուր տոկոսային ծախսերը կազմել են 40,8 մլն ՀՀ դրամ, իսկ 31.12.16 դրությամբ ընդհանուր տոկոսային ծախսը եղել է 543,9 մլն ՀՀ դրամ՝ պակաս լինելով գործարար ծրագրով նախատեսված 590 մլն-ից:
 2016թ. ընթացքում Ընկերությունն կնքել է կարճաժամկետ ավանդային պայմանագրեր իննպես դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով, որոնք 2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովել են ընդամենը 4.6մլն դրամի տոկոսային եկամուտ:



դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2016 թվականին Ընկերության կողմից ներգրավվել են 20-ից ավելի հաճախորդ, ինչպես ֆիզիկական այնպես էլ իրավաբանական անձինք, որոնց հետ կնքվել են ՀՀ Պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ: 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործող հակադարձ ռեպո պայմանագրերի քանակը կազմել է 10 հատ (1,340 մլրդ դրամ արժեքով, անվ. արժեքը՝ 1,287 մլրդ դրամ):

Ընկերությունը 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի փաթեթի հավատարմագրային կառավարման գծով առայժմ ներգրավել է 2 ֆիզիկական անձ հաճախորդ և ունի կնքված 2 գործող պայմանագիր:

ե) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա:

2016 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

2016 թվականի ընթացքում Ընկերությունն իր կադրային ներուժը համալրել է ներքին աուդիտի անդամի պաշտոնով, նախատեսելով բարձրացնել ընթացիկ ստուգման /մոնիտորինգի/ արդյունավետությունը, ինչպես նաև արժեթղթերի փաթեթի հավատարմագրային կառավարման համար անհրաժեշտ հետևյալ պաշտոններով՝ հավատարմագրային կառավարիչ, պահառու, խորհրդատու:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում:

Նշենք, որ Ընկերության բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2016 թվականի ընթացքում մասնակցել են տարբեր մասնագիտական որակավորման դասընթացների, բարեհաջող հանձնել են քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

գ) նորամուծություններ.

Ընկերությունը 2016թ ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռ-ուսական, Ուկրաինական, Հունական արժեթղթերի շուկաները, որը հնարավորություն է տվել ներդրում կատարել Ռ-ուսական արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը:

Ընկերությունը 2016թ ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությամբ արտահանել է ՀՀ ԿԲ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը 2016թ-ին ևս մի շարք բանկերի հետ կնքել է գլխավոր համաձայնագրեր և այդ գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

Ընկերությունը 2015թ.-ից տեղափոխվելով նոր գրասենյակ դարձել է ավելի հասանելի հաճախորդների համար: Ընկերությունն ամբողջությամբ նորոգել և կահավորել է գրասենյակը, ապահովելով օրենքով սահմանված անվտանգության բոլոր համակարգերը, համալրել է լիովին նոր համակարգչային և այլ անհրաժեշտ կենցաղային տեխնիկայով, ապահովել է ցանցային սպասարկման նոր որակ, ստեղծել է ժամանակակից և հարմարավետ գրասենյակ:

է) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2016 թվականին ուղղված է եղել պետական պարտատոմսերում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության

ապահովմանը: 2014թ-ի ընթացքում Ընկերության կողմից ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ ՍՊԸ ապրանքային նշանի/խորհրդանշի LOGO/ գրանցումը 2016թ-ի ընթացքում ապահովեց ուժեղ բրենդի ստեղծումը, ինչի շնորհիվ առավել ճանաչելի դարձավ ՀՀ ֆինանսական շուկայում: Այդ հնարավորություն տվեց ներկայանալու նոր ձևաթղթերով, վարել նոր գովազդային քաղաքականություն /խորհրդանիշով օրացույցներ, նոթատետրեր և այլն/, ինչն էլ ավելի բարձրացրեց Ընկերության գնահատականը/Rating/ հաճախորդների շրջանում:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնհինգ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հստությունը և իրազեկությունը թույլ տվեցին ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները, որի արդյունքում ավելացել են Ընկերության եկամուտները:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Սիմոնյան